ԱՌ ԵՐԿՆԱՅԻՆԸ

Ինչի՛ր, ինչի՛ր, ո՛վ Երկնային,
Կայծակ, փայլակ արծակիր.
Անիրաւին, չարագործին
Հիմնայատակ խորտակիր։

Նայի՛ր նորան, այն թշուառին,
Նա ընկերից է մատնուած.
Նորա տունը, նորա տեղը
Իւր եղբօրից կողոպտած։

Իսկ այն խցում, խոնաւ ու մութ,
Սովից աղքատն է մեռնում.
Նրան դրկից հարուստն անգութ
Մեծ խնջոյք է կատարում։

Չկայ եղբայր, չկայ բոյրիկ,
Այդ բոլորն է մոռացուած.
Միայն գրպան, կուշտ ստամոքս,
—Ահա՛ ինչով են զբաղուած։

Մէկը ընկած արտասուում է,
—Միւսը կողքին՝ ծիծաղում։
Սէր, սրբութիւն մոռացուած է,
Անօրէնութիւն տիրում։

Սորա թափած յորդ արցունքը
Նորան խի՛նդ է պատճառում.
Նորա տխուր աւերակը
Սորա ժպի՛տն է շարժում։

Ահա՛ դժոխք, ահա՛ գեհեն,
Որի մէջ ինքներս տանջւում.
Ահա անտակ սեւ ու մութ հոր,
Որը մենք ենք մեզ փորում։

Ինչի՛ր, ինչի՛ր, վե՛հ Դատաւոր,
Կրակ ու բոց Դու թափի՛ր.
Անիրաւին, անգութ մարդուն
Հիմնայատակ կործանիր։

Կամ Դու ջնջէ մեր աշխարհը,
—Որ մենք հանգիստ ունենանք,
Կամ Դու սրբէ մեր սրտերը,
—Որ մենք սիրել կարենանք։

ՀԱՄԲ. ԻՍԱՀԱԿԵԱՆ

Բագու